Գերյարգելի և գերապատուելի տեառն Մխիթարա Աբբայի
մեծաւ յարգութեամբ խոնարհաբար ողջոյն

. . . Լիվոռնայ եղեալ եպիսկոպոսքն ամսիս 15 հասին տեղս յոյժ չքաւորութեամբ. և մին աւուր ծաղկազարդ գրով զանազան կոնտակս ցոյց տվին վրդանէս եպիսկոպոսին, քահանանութեանց և եպիսկոպոսութեանց իւրեանց, թաքուցանելով զայն ամենայն զօր հարկաւոր էր ծանուցանելն առ ի խնդրել զօրհնութիւն, բայց մեք՝ նախ քան իւրեանց ժամանելն ալիկուռնայու լվեալ էաք բանին ոռպխութիւնն, զի կուրճի տէր գափրելն ծանուցեալ էր ամենեցուն Լիվոռնայ եղելոց. վասն որոյ հարկադրեցաք նոցա ասել զճշմարիտն. նաև ունէին մի միայն գիր ըստամպօլու Վ՟իքարէն առ սուրբ ժողովն, որով Վ՟իքարն ծանուցանէր զամենայն ինչ, այսինքն թէ սոքա երկուսն ի միասին ումեմնէ էնկուրու առաջնորդէ սարկաւարք եղեալ են, ետոյ ումն Աբէլ եպիսկոպոսէ քահանայ գնացեալ մերց ի սիս յոհաննէս ժանզուլ կաթուղիկոսէ կաչառօք եպիսկոպոսք եղեալ են և անտի շրջագայելով այսր և անդր եկեալն ըստամպօլ. նախ քան իւրեանց հասանիլն թոխաթցի տէր յոհաննէսն գրած է Վ՟իքարին թէ այն Աբէլ եպիսկոպոսն ոչ է եպիսկոպոս. սոքա լսելով այս, գրած են նոր օրհնող նոյն յովհաննէս կաթուղիկոսին առ ի ստուգել. և նա պատասխաներ է թէ յաժմս լաւ մտիս չէ, ետոյ ձեզ ծանուցից թէ ես օրհնեալ եմ զնա թէ ոչ. և սոքա առանց ըսպասելոյ երկրորդ պատասխանոյն անճեր են անատօլի և ումեմնէ պոօխորոն անուն եպիսկոպոսէ վերստին քահանայ օրհնված են։ Եւ այս բանիս կաթողիկոսէն գիր եկեր է թէ Աբել եպիսկոպոսն իրաւի եպիսկոպոս է. այս վերոյ ասացեալն ամենայն Վ՟իքարն իւր գրին ծանուցանէ սուրբ ժողովին, նաև ասելով թէ սոքա դիմեցին առ սուրբ աթոռն առ ի առնուլ զօրհնութիւն և արձակումն ամենայն իւրեանց ապօրինաւոր բանից. բայց եթէ հնար իցէ խնդրեմ սուրբ ժողովեն ոչ թույլ տալ սոցայ առ ի դառնալ ի յարևելս վասն արքելելոյ զմեծ գայթակղութիւնն ի մէջ ուղղափառաց. բայց իւրեանք այս ամենայն վերոյասացեալն ոչ խոստովանին պարզութեամբ. նաև ասեն թէ նոր ճանաչած են զուղղափառութիւնն և ոչ ումեքէ առձակում առեալ են։ Սոյնս ասեն առ թեթևացուցանել զ[յ]անձանս իւրեանց, բայց լաւ տեղեակ են ուղղափառութեան, մանաւանդ այն օր վանքէն ելած է որ յաժմս աթանաս կոչի...։

Պետրոս պատրիարքէն գիր եկաւ Վ՟րդանէս եպիսկոպոսին, ուր ծանուցանէ իւրոյ երջանկութեամբ հասանիլն ի յաղեկսանդր[իա] և անդր ֆրանսըզի պալեօզէն յոյժ սիրով ընդունիլն ի պալատս իւր. նաև ծանուցանէ ումն ուսէին փաշա բազում զօրօք գնալ ի լիփանան առ աւերել զվանօրայս, և անդ եղեալքն լսելով զայս, մանաւանդ պատրիարքի վանքն երեք օր և երեք գիշեր մեծաւ աղերսանօք աղօթս արարեալ են. և տ քանի աւուր խապար եկեր թէ նոյն փաշան անկարծակի մահով սատակեր է և իւրային զօրքն ճիրուցան եղեր են։ Նոյն պատրիարքն աղեքսանդրու քալեր է կիպրոս և անտի իւր վանքն. սոյն գիրս տօն տօմէնիքօն թարքմանել տվաւ և ետ կարտինալ քարաֆին և սա փափին ձեռն հասոյց որ յոյժ ուրախութեամբ ընկալաւ։...

Ամի տեառն 1743 դեկտեմբերի 21 [Պատկերահան] Յոհաննէս

[ի Հռովմ]

Եպիսկոպոսաց կոնտակքն ցոյց կուտայ թէ ըստ կարգի և արարողութեան արարեալ են եպիսկոպոսք և ոչ լոկ բանիւ։

ՃԻԹ.

Շնորհաւորական թուղթս պիտի հետաքրքրէ գրութեան ձևին և արտայայտութեան կերպերուն համար։